Սայաթ Նովա

Աստուած խիալ արից սըվթա

Աստուած խիալ արից սըվթա1
Ստիղծից նախ մարդըն Աթամ.
Աթամի կուղէմէն քաշից,
Յիվան տըվից նըրան համդամ:

-Համդամ գ’ուզիք՝ է՛ս ձիզ դարար,-
Տէրըն ասաց,- չո՛ւտիք էս բար,
Թէ չէ կու տեսնիք մինձ զարար,
Վուր առիլ իք էս պըտղի համ:

Համ առնիլըն ուզից նախամայր Յիվան,
Չարըն գըթաւ նըրան, տըվին իրար կամ:

/Կամով նընգաւ չարի թոռըն/,
Քաղից արգիլված խնձորըն,
Խաբից Աթամ նախահորըն,
Կերան ու դառան մերկանդամ:

Մերկացան ու ամաչեցին,
Փօշման դառան ու լացեցին,
Տէրըն վուր էկաւ՝ խաբեցին.
Թէ՝ օձըն էր՝ արաւ սիթամ:

Սիթամ արից Տէրընն էլ, քըշից դըրախտէն,
Քանի վուր պատվիրքըն չըպահին թաման:

Թաման մութ բըռնից աշխարհըն,
Ի՞նչ է Աթամ-Յիվի Ճարըն.
Սատանէն գըթաւ հընաըն.
Ասաց՝ գ'ուզի՞ք, ձիզ լուս կու տամ:

Կու տամ, ասաց, գիրըն առաւ.
Յորդանանու գիդըն տարաւ,

Աթամ վուր էդ շարթըն արաւ՝
Նաթիջում դըժոխք գընաց ջամ:

Ջամ հազար տարի անց Տէրն էկաւ աշխարհ,
Ազատից հոգիքըն, բան չըթուղից քամ:

Քամ ու նիղ օրիր տեսան շատ:
Ով ունեցաւ յոյս ու հաւատ,
Իդրաղին մընացողըն հաստատ
Տէրըն կու յիշէ ամէն ժամ:

Ժամըն ու ժամանակն է նիղ.
Մահըն գուքայ ամենան տիղ.
Կու լինի դադաստան ահիղ.
Աղաչիմ Փըրկիչըն՝ յուսամ:

Յուսամ Սայաթ-Նովէս, միղքիրըս քաւիմ,
Թէ չէ դադաստանին յիս ի՞նչ ջուղաբ տամ: